



ՊԱՐԵՆԻ, ՄՆՆԴԱՌՈՒԹՅԱՆ ԵՎ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ՀԱԶԱՐԱՄՅԱԿԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ



Այս հրատարակությունը (խմբագրությունը) ներկայացնում է «Հայաստանի գյուղական համայնքներում ագրոկենսաբազմազանության պահպանության և օգտագործման միջոցով կենսաալիանսների բարելավում» ծրագրի արդյունքների մի մասը: Գլխավոր Էկոլոգիական Հիմնադրամի (ԳԷՀ) կողմից աջակցվող սույն ծրագիրը համակարգվում է Բիովերսիթի Ինթերնաշնալի (IPGRI) կողմից ՄԱԿ-ի շրջակա միջավայրի ծրագրի իրականացման աջակցությամբ (UNEP):

ԿԱՅՈՒՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ

2016թ. հունվարի 1-ից պաշտոնապես ուժի մեջ են մտել 2015թ. սեպտեմբերին Նյու Յորքում կայացած՝ ՄԱԿ-ի Կայուն զարգացման գաղաթնաժողովին աշխարհի երկրների առաջնորդների ընդունած՝ **«Վերափոխենք աշխարհը. կայուն զարգացման օրակարգ 2030-ում»** ներառված 17 նպատակները: Առաջիկա 15 տարվա ընթացքում, առաջնորդվելով բոլորին վերաբերող այս նոր նպատակներով, երկրները կհամախմբեն իրենց ջանքերը՝ վերացնելու աղքատությունը, պայքարելու անհավասարությունների դեմ և լուծելու կլիմայի փոփոխության հետ կապված խնդիրները՝ միաժամանակ հետևելով, որ ոչ ոք չանտեսվի:



Կայուն զարգացման նպատակները հիմնվում են հազարամյակի զարգացման նպատակների (ՀԶՆ) արձանագրած հաջողությունների վրա և նպատակաուղղված են վերացնել աղքատությունն՝ իր բոլոր ձևերով ու դրսևորումներով: Նոր նպատակները բացառիկ են այնքանով, որ բոլոր երկրներին՝ հարուստ, աղքատ, և թե միջին եկամուտ ունեցող, կոչ են անում անցնել գործողությունների՝ խթանելու բարգավաճումը և միաժամանակ պաշտպանելու մոլորակը: Այստեղ հաշվի է առնված, որ աղքատության վերացումը պետք է ուղեկցվի այնպիսի ռազմավարությունների կիրառմամբ, որոնք կնպաստեն տնտեսական աճի

խթանմանը և սոցիալական մի շարք կարիքների բավարարմանը, այդ թվում՝ կրթության, առողջապահության, սոցիալական պաշտպանության և աշխատանքի հնարավորությունների ոլորտներում՝ միաժամանակ լուծելով կլիմայի փոփոխության և շրջակա միջավայրի հետ կապված խնդիրները:



Թեև կայուն զարգացման նպատակներն իրավաբանորեն պարտադիր չեն, կառավարություններից ակնկալվում է ստանձնել հանձնառություններ և մշակել ազգային ծրագրեր՝ այդ 17 նպատակներին հասնելու համար: Երկրներն առաջնային պատասխանատվություն ունեն իրականացնել հետևողական գործողություններ ու դիտարկել նպատակների իրագործման առաջնթացը, ինչը պահանջում է որակյալ ու մատչելի տվյալների ժամանակին հավաքագրում: Տարածաշրջանային հետազա գործողություններն ու դիտարկումները հիմնված կլինեն ազգային մակարդակի վերլուծությունների վրա և կնպաստեն հետազա գործողությունների ու դիտարկումների իրականացմանը՝ գլոբալ մակարդակում:

Պատմության մեջ աղքատության դեմ պայքարի առավել հաջող շարժմանը ծնունդ են տվել հազարամյակի զարգացման նպատակները, որ ծառայում են՝ որպես Կայուն զարգացման օրակարգի հենակետ:

Զարգացող աշխարհի գրեթե կեսը երկու տասնամյակ առաջ ծայրահեղ աղքատության մեջ էր: Հազարամյակի զարգացման նպատակների ընդունումից ի վեր ծայրահեղ աղքատության մեջ ապրող մարդկանց թիվը ներկայում ավելի քան կիսով չափ կրճատվել է՝ 1999թ. 1.9 միլիարդից 2015թ. հասնելով 836 միլիոնի:

Այնուամենայնիվ՝ արձանագրված առաջընթացն ըստ տարածաշրջանների ու երկրների բաշխված է անհավասարաչափ, առկա են զգալի բացթողումներ: Միլիոնավոր մարդիկ մնացել են անտեսված, հատկապես՝ ամենաաղքատներն ու սեռի, տարիքի, հաշմանդամության, էթնիկ կամ աշխարհագրական ծագման հետևանքով խտրականության ենթարկված անձինք: Ավելին՝ ներկայում կլիմայի

փոփոխությունն ազդում է մայրցամաքների բոլոր երկրների վրա, իսկ դրանից առավել շատ տուժում են ամենաաղքատ ու ամենախոցելի մարդիկ:

1992թ. Բրազիլիայի Ռիո դե Ժանեյրո քաղաքում կայացած՝ ՄԱԿ-ի Շրջակա միջավայրի և զարգացման խորհրդաժողովից (Երկրի զագաթնաժողով) ի վեր աշխարհը բացահայտել է մարդկային բարեկեցության հասնելու նոր ճանապարհ՝ կայուն զարգացումը: Կայուն զարգացման հայեցակարգը, որ ներկայացված էր [Կլիմայի փոփոխության մասին ՄԱԿ-ի շրջանակային կոնվենցիայի Կողմ երկրների 21-րդ համաժողովում](#), բնորոշվում է որպես զարգացում, որ բավարարում է ներկայի պահանջները՝ առանց վնաս հասցնելու ապագա սերունդների՝ սեփական կարիքները հոգալու կարողությանը:



Կայուն զարգացման նոր օրակարգը հիմնված է 2002թ. Կայուն զարգացման համաշխարհային զագաթնաժողովի, 2010թ. Հազարամյակի զարգացման նպատակների, [2012թ. ՄԱԿ-ի Կայուն զարգացման խորհրդաժողովի \(Ռիո+20\)](#) արդյունքների ու ողջ աշխարհի մարդկանց տեսակետների վրա:

Ռիո+20-ի «Ապագան, որ մենք ենք ուզում» ելքային փաստաթղթում ՄԱԿ-ի անդամ պետությունները համաձայնել են ստեղծել բաց աշխատանքային խումբ՝

մշակելու կայուն զարգացման մի շարք նպատակներ: Բաց աշխատանքային խումբ ստեղծելու առաջարկը, որը հաստատվել է 2014թ. հունիսին, Կայուն զարգացման օրակարգ 2030թ-ի առանցքն է:

Պարենի, սննդառության և գյուղատնտեսության հետ կապված հազարամյակի զարգացման նպատակները



Հայաստանի գյուղատնտեսությունն ամբողջապես չի օգտագործում իր ներուժը՝ ներկայումս դրսևորելով ցածր արտադրողականություն և ոչ բավարար մրցունակություն: Ազգային հարստության (հողի, ջրի, անտառների և այլն) անկումը, հիմնական բերքերի և անասունների արտադրության անկումը, կենսաբազմազանությանը հասցված վնասները, էկոլոգիական հավասարակշռության անկայունությունը այն խնդիրներից են, որոնք խոչընդոտում են Հայաստանում գյուղատնտեսության զարգացումը: Գյուղերի չքավորությունը, աշխատանքային հնարավորությունների բացակայությունը և գյուղերում ապրուստի ցածր մակարդակը խոցելի են դարձնում Հայաստանի գյուղական շրջանները:

Համաշխարհային քաղաքակրթությունը հասարակության համար միշտ էլ որոշակի մարտահրավերներ է առաջադրում, որոնցից ամենագլխավորը թերևս

մարդկանց պարենամթերքով բավարարելու խնդիրն է: Դրա հիմնական պատճառն ազգաբնակչության թվաքանակի կայուն աճն է, երկրագնդի վրա հաճախակի դարձած բնական և էկոլոգիական աղետները՝ երաշտները, ջրհեղեղները, հրդեհները և այլ երևույթներ, որոնք պարենային ապահովվածության հարցը դարձնում են գերակա խնդիր:

Համաշխարհային ընդհանրական խնդիրների շարքում Հայաստանի համար ավելանում են նաև հանրապետության գյուղատնտեսական օգտագործելի հողերի, մասնավորապես ոռոգելի հողերի սակավությունը, դրանց ոչ արդյունավետ օգտագործումը կամ ջրային պաշարների անարդյունավետ օգտագործումը, գյուղատնտեսական հողերի մասնատվածությունը,



սպառման շուկայի մարկետոլոգիական և գյուղատնտեսության վարման ժամանակակից մենեջմենթի բացակայությունը և այլն: Չնայած վերջին տարիներին լուրջ ծրագրեր են մշակվել գյուղատնտեսության զարգացման ուղղությամբ, սակայն հաճախ դրանք համակարգված բնույթ չեն կրում: Անհրաժեշտ է, որ այդ ծրագրերը համահունչ լինեն գյուղատնտեսության զարգացման միտումներին և հաշվի առնեն ագրարային գիտության նորագույն նվաճումներն ու բարձր տեխնոլոգիաները: Այսօր աշխարհի առաջավոր երկրներում գյուղատնտեսության զարգացումն իրականացվում է ագրարային տեխնոլոգիաների և երկրագործության վարման արդյունավետ ու ինտենսիվ համակարգերի ներդրմամբ գյուղատնտեսական մթերքների արտադրության ծավալների ավելացումը զուգակցվում է շրջակա միջավայրի և կենսառեսուրսների անվտանգության պահպանման, օրգանական ծագման մթերքների և առողջ սննդի ծավալների ավելացմանը նպաստող միջոցառումների կիրառմամբ: Նպատակաուղղված և արդյունավետ ագրարային քաղաքականության իրականացումը, ագրոպարենային համակարգի զարգացումը, երկրի պարենային անվտանգությունը և բնակչությանն անվտանգ սննդամթերքով ապահովումն այսօր Հայաստանի Հանրապետության գյուղատնտեսության զարգացման ռազմավարության առանցքային գերխնդիրն է: Այս ամենն առանց

համապատասխան գիտելիքներով և փորձով օժտված մասնագետների ու գիտական հետազոտությունների անիրական է: Չնայած հանրապետության ագրարային համակարգում արդեն ձևավորվել է կրթական և գիտահետազոտական հաստատությունների լայն ցանց, որի խնդիրն է գյուղատնտեսական արտադրությունն ապահովել բարձրորակ, աշխատաշուկայի ժամանակակից պահանջները բավարարող մասնագետներով, սակայն անհարաժեշտ է Հայաստանում վերջնականապես հասնել գիտահետազոտական համալսարանական համակարգի ժամանակակից մոդելի ձևավորմանը, որն իր մեջ սերտորեն կշաղկապի ժամանակակից կրթությունն ու կիրառական գիտությունը:



Գյուղատնտեսությունը, որն ապահովում է մարզերի բնակչության հիմնական զբաղվածությունը, հետապնդում է գյուղացիական տնտեսությունների եկամուտների ավելացման և արդյունքում գյուղական աղքատության կրճատման նպատակը: Գյուղատնտեսության ոլորտի ռազմավարությունը նպատակաուղղված է մարզերի ռոռզման համակարգի բարելավմանը, գյուղատնտեսական մշակաբույսերի բերքատվության և արտադրության արդյունավետության բարձրացմանը, գյուղատնտեսական կենդանիների մթերատվության ավելացմանն ու հիվանդությունների կանխմանը, անասնապահական մթերքի որակի և արտադրության արդյունավետության բարձրացմանը, հողային և մարդկային ռեսուրսների լիարժեք օգտագործման ապահովմանը, գյուղատնտեսության արտադրական ենթակառուցվածքների բարելավմանը, գյուղմթերքի իրացման հնարավորությունների ընդլայնմանը, գյուղացիական տնտեսությունների մասնագիտական կարողությունների բարձրացմանը, գյուղատնտեսության

վարկավորման մատչելիության բարձրացմանը և գյուղատնտեսության ոլորտում ապահովագրական համակարգի զարգացմանը: Նաև անհրաժեշտ է խթանել ոչ գյուղատնտեսական գործունեությունը գյուղական բնակավայրերում, օրինակ՝ հանքարդյունաբերությունը, արհեստագործությունը, զբոսաշրջությունը, տեղեկատվական տեխնոլոգիաները, որոնք, բնականաբար, կնպաստեն գյուղաբնակների զբաղվածության աճին և կենսամակարդակի բարձրացմանը:

Պարենային անվտանգության բնագավառն ազգային անվտանգության կարևորագույն բաղադրիչներից է: Այն կարևորվում է ինչպես միջազգային, այնպես էլ Հայաստանի Հանրապետությունում ընդունված բազմաթիվ իրավական ակտերով:

Յուրաքանչյուր երկրի պարենային անվտանգությունը համարվում է ապահովված, եթե առկա է տնտեսության այնպիսի մակարդակ, որն երաշխավորում է բնակչության համար առողջապահական նորմերին համապատասխանող սննդամթերքի ֆիզիկական ու տնտեսական մատչելիությունն ինչպես խաղաղ, այնպես էլ՝ արտակարգ իրավիճակներում:

Վերջին տարիներին իրականացվող սոցիալ-տնտեսական բարեփոխումների շնորհիվ հանրապետությունում ձևավորվել են պարենային անվտանգության մակարդակի բարձրացման որոշակի նախադրյալներ, սակայն բնակչության կայուն և լիարժեք պարենապահովման հարցում դեռևս առկա են լուծում պահանջող խնդիրներ: Այդ խնդիրների լուծումը հնարավոր է իրագործել միայն այնպիսի պետական միասնական քաղաքականության իրականացման շնորհիվ, որը կերաշխավորի մրցունակ ագրոպարենային համակարգի կայացումը, տարածքային համաչափ զարգացումը, արտակարգ իրավիճակներում պարենային ճգնաժամերի առաջացման կանխարգելումը, մակրոտնտեսական կայունությունը, բնակչության սնուցման լիարժեքությունը, սննդամթերքի ինքնաբավության անհրաժեշտ մակարդակը, ինչպես նաև սոցիալապես խոցելի խմբերի հուսալի պաշտպանվածության իրականացումը՝ հնարավորինս բացառելով շրջակա միջավայրի վրա բացասական ներգործությունը և ապահովելով բնական ռեսուրսների հավասարակշռված օգտագործումը: Վերը նշվածը վկայում է պարենային անվտանգության հիմնախնդրի չափազանց կարևորության ու բարդության մասին, որի լուծումն ինչպես ամբողջ աշխարհում, այնպես էլ մեր երկրում առավել հրատապ է դառնում:

Չնայած որոշ ձեռքբերումների, գյուղատնտեսության ոլորտի զարգացմանը և պարենային անվտանգության ապահովմանը խոչընդոտող գործոնները և հիմնախնդիրները բազմազան են: Երկրի պարենային անվտանգության մակարդակի բարձրացման առումով, անհրաժեշտ է խոչընդոտող գործոնների և խնդիրների համապարփակ վերլուծության արդյունքները հիմք ունենալով մշակել և կիրառել համապատասխան ագրարային քաղաքականություն՝ նպատակաուղղված ծառացած խնդիրների աստիճանական լուծմանը: Նշված խնդիրներից առավել կարևոր են .

● **Գյուղատնտեսական**

արտադրությունում արդյունավետ տնտեսավարումը դեռևս լրջորեն խոչընդոտվում է գյուղացիական տնտեսությունների փոքր չափերից, ինչը հնարավորություն չի ընձեռում կիրառել ինտենսիվ տեխնոլոգիաներ և դրանց արդյունքում բարձրացնել



աշխատանքի արտադրողականությունը: Նշվածի հետ մեկտեղ, դանդաղ են ընթանում գյուղատնտեսությունում տնտեսավարման տարբեր ձևերի, մասնավորապես՝ կոոպերատիվների ձևավորման և դրանց գործունեության ընդլայնման գործընթացները:

● **Կարևորագույն հիմնախնդիր է** շարունակում մնալ գյուղատնտեսական հողատեսքերի, մասնավորապես՝ վարելահողերի նպատակային օգտագործման ցածր մակարդակը: 2011 թվականի տվյալներով վարելահողերի նպատակային օգտագործման մակարդակը կազմել է շուրջ 64.0 տոկոս: Վարելահողերի չօգտագործման պատճառները բազմազան են: Դիտարկումների արդյունքներով բացահայտվել է, որ վարելահողերի նպատակային չօգտագործման պատճառների մեջ առավել ընդգծված է գյուղացիական տնտեսությունների ֆինանսական միջոցների անբավարարությունը, որոնց տեսակարար կշիռը, հանրապետության մարզերի միջինացված տվյալներով, կազմում է 18.9 տոկոս: Մեծ ազդեցություն ունեցող հաջորդ պատճառներից է՝ ցածր եկամտաբերությունը, որի միջին ցուցանիշն ըստ

դիտարկումների կազմել է 16.9 տոկոս: Վարելահողերի օգտագործման մակարդակի վրա ազդող գործոններից է նաև մեքենայական աշխատանքների դժվարամատչելիությունը, հողակտորների կտրտվածությունը և հեռավորությունը, ոռոգման ջրով ապահովվածության դեռևս ցածր մակարդակը և այլն:

●Վերջին ժամանակահատվածում իրականացված որոշակի ծրագրերի հետ մեկտեղ գյուղատնտեսության ոլորտի առջև ծառացած հաջորդ խնդիրը կապված է սերմնաբուծության համակարգի դեռևս անկատարության, պարարտանյութերի ու թունաքիմիկատների անբավարար և ոչ ճիշտ օգտագործման, մշակության ագրոտեխնիկական կանոնների խախտման հետ, որի հետևանքով ցածր է գյուղատնտեսական մշակաբույսերի բերքատվությունը, հետևաբար՝ արտադրության արդյունավետությունը:



●Լուծում պահանջող խնդիրներ են առկա նաև անասնապահության ճյուղում: Անցումային ժամանակահատվածում, բացի բնակչության վճարունակ պահանջարկի նվազումից, սեփական կերարտադրության կրճատման և ներմուծվող կերերի



ծավալների կտրուկ անկման հետևանքով զգալիորեն կրճատվեց անասնազլխաքանակը, հետևաբար՝ որոշ անասնապահական մթերքների արտադրության ծավալը: Կերային մշակաբույսերի կտրուկ կրճատման հետ մեկտեղ, դեռևս անբավարար են օգտագործվում բնական

կերահանդակները: Մասնավորապես, նկատելի է գյուղամերձ արոտավայրերի գերբեռնվածությունը և հեռագնա արոտների սահմանափակ օգտագործումը: Վերջիններս հանգեցնում են լուրջ տնտեսական կորուստների և արոտավայրերի դեգրադացման:

●Ինչպես հայտնի է, լուրջ խնդիրներ են ծառացել նաև գյուղատնտեսության տեխնիկական ապահովման և սպասարկման ծառայությունների բնագավառում:

Ներկայումս գյուղատնտեսական տեխնիկայի և սարքավորումների ավելի քան 95 տոկոսի շահագործման ժամկետը լրացել է, որի պատճառով ցածր է սարքինության մակարդակը և արտադրողականությունը, հետևաբար՝ բարձր են շահագործման ծախսերը և ծառայությունների սակագները:



• Վերը նշված հիմնախնդիրներին ավելանում են գյուղմթերքների իրացման շուկայի ձևավորման դժվարությունները, որը պայմանավորված է տեղական



շուկայում դեռևս ցածր վճարունակ պահանջարկով, ինչպես նաև գյուղատնտեսական մթերքներ գնող-իրացնող շղթայում ենթակառուցվածքների գրեթե բացակայությամբ, դրանց ձևավորման դանդաղ ընթացքով և արտահանման դժվարություններով:

• Մյուս կարևոր հիմնախնդիրն այն է, որ ներմուծվող գյուղատնտեսական ծագման արտադրանքի արժեքը գերազանցում է արտահանվող ծավալները 4 անգամ: Ուստի գյուղատնտեսական ծագման ապրանքների արտահանման ծավալների ավելացումը, ինչպես նաև առևտրային հաշվեկշռի և կառուցվածքի բարելավումը, նույնպես հանդիսանում են ռազմավարական լուծում պահանջող հիմնախնդիրներ:

• Հաջորդ խնդիրը կապված է գյուղատնտեսությունում տնտեսվարողների վարկավորման պահանջարկի բավարարման դեռևս սուղ հնարավորությունների հետ, չնայած նրան, որ վերջին ժամանակահատվածում այս բնագավառում որոշ դրական տեղաշարժեր են գրանցվել: Զյուլի առանձնահատկություններով պայմանավորված՝ վարկերի ստացումը դժվարամատչելի է գյուղացիական տնտեսությունների գերակշռող մասի համար:

●Գյուղատնտեսությունը,
որպես արտադրության ռիսկային
ոլորտ, յուրաքանչյուր տարի զգալի
կորուստներ է կրում տարբեր
բնույթի բնական աղետներից,
ուստի կարևոր խնդիր է ռիսկերի
մեղմմանն ուղղված
միջոցառումների իրականացումը՝



ռոռգումը, հակակարկտային, հակահեղեղային միջոցառումները, պաշտպանիչ
անտառաշերտերի ստեղծումը և գյուղատնտեսության ապահովագրության
համակարգի ներդրումը:

Գյուղատնտեսության բնագավառում լավ կազմակերպված
քաղաքականություն իրականացնելու նպատակով 2010թ. նոյեմբերին
կառավարությունը հաստատեց «ՀՀ գյուղի և գյուղատնտեսության 2010-2020թթ.
կայուն զարգացման ռազմավարությունը»: Ռազմավարությամբ սահմանված է
նպատակների 17 խումբ, որոնք, մասնավորապես, ներառում են հակաճգնաժամային
մեխանիզմներ, գյուղատնտեսական արտադրության հզորացում, գյուղատնտեսական
կոոպերատիվների զարգացում, պարենային անվտանգության ապահովում,
հողօգտագործման արդյունավետության բարելավում, օրգանական
գյուղատնտեսության զարգացում և ճյուղի այլ առաջնահերթ ուղղություններ:
Ներկայումս այդ ռազմավարությունն արտացոլված է օրենքում, ուստի պետական
բյուջեում միջոցների մասին դրույթը պարտադիր չէ: Հետևաբար կան անհամարժեք
դրույթներ կամ էլ ընդհանրապես չկան: Ռազմավարությունն իրականացնելու
նպատակով հարկավոր է ներկայացնել «Գյուղատնտեսության մասին» օրենք, որով
կկարգավորվի գյուղմթերք արտադրողների իրավական կարգավիճակը, այնտեղ
կներառվեն պետական գյուղատնտեսական քաղաքականության հիմնական
տարրերը, զարգացման ծրագրերի կատարման և մոնիտորինգի մասին դրույթները
/հաշվետվողականություն/, գյուղատնտեսության կառավարման մարմինների
իրավասությունը և այլ համապատասխան հարցեր:

Կայուն զարգացման ծրագրում /ԿԶԾ/, որը կառավարության կողմից
հաստատվել է 2008թ. հոկտեմբերին, նշված է, որ կայուն տնտեսական աճն

աղքատության նվազեցման հարցում կարևոր գործոն է: 2009-2021թթ. համար այնտեղ նշված է երեք հիմնական նպատակ՝ նվազեցնել աղքատությունը, այդ թվում՝ ծայրահեղ աղքատությունը, ապահովել մարդկային զարգացում, խորացնել տնտեսական աճը և արագացնել հետ մնացող շրջանների զարգացումը: ԿԶԾ-ում ասվում է, որ գյուղատնտեսության ցածր արտադրողականությունը մեծ մարտահրավեր է գյուղատնտեսության և գյուղական շրջանների զարգացմանը: ՀՀ կառավարությունը նախատեսում է, որ պետական աջակցությունը պետք է շարունակվի 2008-2021թթ. և լինի արտադրողականության ավելացման, ենթակառուցվածքներին աջակցելու, սուբսիդիաների, ֆինանսավորման, վերամշակման արտադրության խրախուսման և առաջավոր տեխնոլոգիաների ու ծառայությունների մատուցման ուղղությամբ: ԿԶԾ-ի համաձայն գյուղատնտեսության բնագավառում կառավարության քաղաքականության հիմնական առաջնահերթություններից մեկը լինելու է գյուղատնտեսական ապրանքների արտահանման առաջընթաց աճը և դրանց ավելացումն ընդհանուր արտահանման մեջ: Դեռևս առաջնահերթ է ինքնաբավության ավելացումը ներկրման փոխարինման միջոցով և ներքին արտադրության ավելացումը, ինչպես հետագայում հաստատվեց Պարենային անվտանգության հայեցակարգով: Գյուղատնտեսության զարգացման վերաբերյալ կանխատեսումները հիմնված են հետևյալ քաղաքականության վրա՝

- անցում դեպի գյուղատնտեսության առավել ինտենսիվ զարգացում.
- փոքր գյուղական տնտեսությունները մնում են արտադրության հիմքը, սակայն խրախուսվում է ավելի մեծ և առևտրային ընկերության



հիմնումը, իսկ ներկայումս 2.8 տոկոս կազմող համախառն գյուղատնտեսական արտադրանքը նախատեսվում է մինչև 2021թ. հասցնել մինչև 18 տոկոսի.

- աջակցել ծառայություններ մատուցողներին, առաջնային վերամշակման, մատակարարման և մարքեթինգային կոոպերատիվների զարգացմանը.

- ՀՀ կառավարությունը կշարունակի ներդրումներ կատարել ոռոգման համակարգերում, ճանապարհների, նաև այլ ուղղություններով՝ սերմերի և անասնաբուծության մեջ, գյուղատնտեսական գիտելիքների տարածման ծառայություններ, ռիսկերի մեղմացմանը միտված միջոցառումներ, ներառյալ հակակարկտային կայանները և ռիսկերից ապահովագրման համակարգերը.
- շրջանների միջև եղած անհամամասնությունների մեղմացմանն ուղղված սուբսիդիաներ, գյուղատնտեսական ապրանքների արտադրության համար հավասար հնարավորությունների ստեղծում և արժեքավոր գյուղատնտեսական ապրանքների արտադրության խթանում.
- զբաղվածությունը գյուղատնտեսության մեջ չի ավելանա՝ դրա փոխարեն կիրախուսվի ոչ գյուղատնտեսական վայրերում ՓՄՁ-ների զարգացումը: ՓՄՁ-ների զարգացման միջոցով գյուղացիական տնտեսություններից դուրս զբաղվածության բազմազանեցում.
- գյուղատնտեսության համար ֆինանսական միջոցների ավելացում:

Նախատեսվում է, որ թեպետ գյուղատնտեսությանը պետական աջակցության բաժինը բյուջեում աճում է բացարձակ արտահայտությամբ, ներկայիս 1 տոկոսից 2021թ. կնվազի և կդառնա 0.6-0.7 տոկոս: ԿԶԾ-ի դրույթներն ու փիլիսոփայությունը դրել են 2010-2020թթ. Գյուղատնտեսության և գյուղական շրջանների զարգացման ռազմավարության հիմքը:

Պարենային անվտանգության հայեցակարգով, որը կառավարության որոշմամբ հաստատվել է 2011թ. մայիսի 18-ին, սահմանված են 2011-2020թթ. ժամանակահատվածի համար հիմնական ապրանքների ինքնաբավությունը 10-15 տոկոսով ավելացնելու նպատակները և իրականացվելիք ծրագրերը: Այդ նպատակով Գյուղատնտեսության և գյուղական շրջանների զարգացման ռազմավարությանը համապատասխան հայեցակարգով սահմանվում է յուրաքանչյուր ապրանքի /ցորեն, կարտոֆիլ, միս, կաթ և այլ հիմնական ապրանքներ/ համար պարենային նպատակային հավասարակշռությունը: Պարենային անվտանգության հայեցակարգի որոշ դրույթներ իրականացվում են սերմերի և անասնաբուծության պետական ծրագրերի միջոցով: Այդ բնագավառում քաղաքականության գործողությունները հատվում են պարենային անվտանգության ծրագրերի հետ, ինչպիսիք են օրենսդրական փոփոխությունները, լաբորատորիաների, հարմարությունների և

ենթակառուցվածքների արդիականացումը, վտանգավոր սննդամթերքները պարզելու համար վաղ կանխարգելման և արձագանքելու համակարգերի ստեղծումը, ISO-ի չափանիշներ մտցնելը, ԳԶՕ-ներ պարունակող սննդամթերքների ռիսկերի պետական գնահատումը, սննդամթերքների արտադրության և տեղափոխման բոլոր փուլերում պետական վերահսկողությունը:

Առավել կարևոր գերակա ոլորտների ցանկը

Անհրաժեշտ է գյուղական զարգացման, այդ թվում նաև գյուղատնտեսական համակարգի ավելի կայուն մոդել, որն ավելի լավ կապեր է հաստատում շուկաների հետ եւ ընտանիքներին ու ֆերմերներին ավելի բարեկեցիկ կենսակերպ ու եկամուտ է առաջարկում: Այսպիսով, առավել կարևոր գերակա ոլորտները հետևյալն են. ավելացնել գյուղատնտեսական արտադրանքը և զարգացնել շուկայագիտական համակարգերը, բարելավել հողօգտագործումը, մեծացնել հողագործության և արտադրական համակարգերի արդյունավետությունը՝ գյուղատնտեսական հաջող գործելակերպի համաձայն, բարձրացնել ապրանքների մրցունակությունը:

Գերակայությունները կարող են հետևյալ կերպ կառուցվել.

Առանցք 1: Բարելավել գյուղատնտեսության ոլորտի արտադրողականությունը, շուկայի արդյունավետությունը, նաև պարենային անվտանգության և որակի չափորոշիչները

- Գյուղատնտեսական արտադրանքի ռեսուրսների (հատկապես հողային ռեսուրսների) արդյունավետ օգտագործում՝ համագործակցության տարբեր տեսակների, առաջնային արտադրող և վերամշակող կողմերի միավորման, նոր տեխնոլոգիաների ներդրման և այլնի միջոցով
- Կայուն գյուղատնտեսություն և գյուղական զարգացում՝ գյուղատնտեսական հաջող գործելակերպի և համապատասխանության մեխանիզմների ներդրման միջոցով
- Արտադրության և վերամշակման տեխնիկայի, սարքավորումների և տեխնոլոգիաների արդիականացում
- Պարենային անվտանգության ապահովում և հիմնական սննդամթերքի ինքնաբավության

- Պարենային անվտանգության, արտադրանքի որակի և սանիտարիայի ու բուսասանիտարիայի միջոցների բարելավում, դրանց համապատասխանեցում եվրոպական չափորոշիչներին
- Տեղական և միջազգային մակարդակով շուկայի արդյունավետության բարելավում, համագործակցության բարելավում արժեքային շղթաների ուղղությամբ:

Առանցք 2: Գյուղական տնտեսության զարգացում (բազմազանեցում, ենթակառուցվածքներ)

- Քաղաքական շրջանակ գյուղական զարգացման համար
- Համայնքների կողմից ուղղորդվող տեղական տնտեսական զարգացման ռազմավարություններ/ծրագրեր
- Աջակցություն ոչ ֆերմերային զբաղվածությանը՝ ՓՄՁ զարգացման միջոցով
- Գյուղական ենթակառուցվածքների արդիականացում
- Օժանդակություն տեղական մակարդակով մասնավոր-հանրային գործընկերությունների հաստատմանը:

Հորիզոնական կարողությունների հզորացմանը ցուցաբերվող աջակցությունն, այլոց թվում, հիմնվում էր մասնակից երկրների փորձի վրա՝ գյուղական զարգացման ռազմավարությունների շահագրգիռ կողմերի կարողությունների զարգացում (ֆերմերներ, քաղաքացիական հասարակություն, ջրօգտագործողներ), ազգային և տեղական կառավարման մարմինների ինստիտուցիոնալ կարողությունների զարգացում: